ընդհանրապէս լողանալու արարողութեան վերաբերւում են շատ լուրջ, իբրեւ մի սրբազան ծէսի: Մերկ մարմնի տեսքին նրանք արդէն վարժւած են, եւ մեղքը եւրոպացուն է, եթէ նա չէ կարող ուղիղ աչքով մերկութեանը նայել:

Ամեն տուն ունի լողանալու յատկացրած իր տակառը, ուր ամեն օր մկրտւում է ամբողջ ընտանիքը. միակ անյարմարութիւնն այն է, որ բոլորն էլ, մեծ ու փոքր, տէր ու հիւր, միեւնոյն ջրի մէջ են մտնում իրար ետեւից:

⁂

Ճապոնացիք իրար վերաբերմամբ չափազանց քաղաքավարի են ու սիրալիր: Կասկած չկայ, որ աշխարհիս ամենաքաղաքավարի ժողովուրդն է դա, եւ այդ զգացումը նրանք մօր կաթի հետ են ծծում:

Դեռ շատ մատաղ հասակից երեխային ներշնչում են, թէ ի՛նչպէս պէտք է իրան պահէ դէպի ծնողները, մեծերը, եւ ընդհանրապէս իր շրջապատողները:

Այդ քաղաքավարութիւնը տիրում է հասարակութեան բոլոր խաւերի մէջ անխտիր: Ամենահասարակ կօշկակարը, նոյն իսկ մուրացիկ կինը իր խօսքով ու ձեւերով իրան ճիշտ այնպէս է պահում, ինչպէս մեր մի ազնւական տիկին իր հանդիսաւոր երեկոյթի ժամանակ:

Մասնաւորապէս քաղաքավարի են դէպի մեծերը: Ծերութիւնն ու հնութիւնը շատ է յարգւած Ճապոնում: Բայց այդ յարգանքի զգացման մէջ ամենեւին անձի ստորացում չկայ. դա գալիս է սրտից ու բղխում է ուրիշներին վիշտ չը պատճառելու անկեղծ ցանկութիւնից:

Ճապոնացի ու կոպտութիւն – իրար չը բռնող բառեր են: